Բ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒՆԻՍ 1899 — ԹԻՒ 135

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԴՐՈՒԹԻՒՆ
Ուղղարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տլր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—)(—
Ժամանուցման տողը 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0|0 զեղչ կը լլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

Նամակ եւ դրամ ղրկել
Խմբագրութեանս հասցէին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Գրութիւնք ետ չեն տրուիր

)(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)(

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Ե՞Տ ԹԷ ՅԱՌԱՋ

—

Մեր ժամանակներում ղէնքով և արեան շնորհիւ ազատված ազգերի թէ սրտաճմլիկ և թէ հերոսութիւններով լի պատմութիւնը, գրեթէ նոյն մանրամասնութիւններով, կրկնվեց մեր վերջին տարիների կեանքում։ Կարելի է ասել, որ բաւական է միայն փոխել այդ ապստամբած և արդէն ազատված ազգերի գործիչների, տեղերի անունները, պատահած յուսահատեցնող և քաջալերող դէպքերի թւականները և ահա մեր աչքի առջեւ կը պատկերանայ Հայկական յեղափոխութիւնը իր բոլոր ձեւերով ու գոյներով, և նոյն տրուկ ու ապստամբած ժողովուրդը իր վարդագոյն յոյսերի, յուսախաբութեան և լքման պարբերաբար միմեանց յաջորդող վայրկեաններով։

Բայց այսօր մեր ակնարկած ազգերը արդէն ազատ են և իրանց երկրի տէրը. օտար բռնակալի ծանր սուրը էլ չէ շողշողում նրանց գլխի վերեւում։ Նրանց տանջանքները և տրկութեան պատճառած դառնութիւնները վերջացել են և պատմական անցեալ են համարվում։

Երանի՜ նրանց։

Մենք ի՞նչ վիճակում ենք, ո՞ւր ենք հասել. ո՞րքան ենք առաջացել յեղափոխութեան փշոտ ու տանջանքներով լի ճանապարհի վրայ։ Ցաւալի է խոստովանել, որ հազիւ ճանապարհի կէսն ենք անցել և հասել այնպիսի մի կէտի, որից ետ դառնալը մեզ համար կորստաբեր է, իսկ շարունակելը՝ նորանոր տանջանքների և զոհերի մի հնոց։

Թշնամու ուժգին հարուածները օդը ցնդեցրին մեր ժողովրդի վարդագոյն յոյսերը, որոնց ամենաշուտ իրականացմանը սպասում և հաւատում էր նա անհամբեր երեխայի միամտութիւնով։ Ժողովուրդը, յուսախաբված այդ բաղմագլխանի երեխան, ընկճված անցած հարվածներից, սարսափած ապագայում դալիքներից՝ շարեց և կանգնած մնաց ճանապարհի մէջտեղում։ Եւ ահա այդ միջոցին էր որ մեծ եռանդով ասպարէզ ելաւ մեր հակայեղափոխական տարրը՝ իր զանազան ճիւղաւորումներով՝ որոնք կրում են չեղոք, անկողմնակալ, խոհեմ, քննադատ և այլ տիտղոսները։ Այդ տարրը, հայ ժողովրդի ամենամեղկ և վատ մասը, սկսեց ցնխոտել ապատութեան ասուծուն, մրոտել նրա անձնուէր զինուորներին և ճիգ թափել գետին տապալելու այն, ինչ որ երէկ ժողովրդի համար պաշտելի էր և որի վրայ յոյս դրած՝ հայը դիմել էր յեղափոխութեան։ Նոյն այդ ՁՈՒԱՍԱԿԱՐ և վատ տարրը, ժողովրդի արդանդից վիժած այդ հրէշն է, որ այսօր զանազան դիմակներով ժողովրդին հաճելի՝ բայց անհասկանալի դարձուածներով, օրօրներ է կարդում ժողովրդին և նրա տրկական ձգտումները ու արամադրութիւնները քաջալերում։ Նա այդ կատարում է բաւական կանոնաւոր կերպով. նախ շարած ժողովրդին համոզելով, որ յեղափոխական առաջնորդները իրանց բոլոր նախահայրերով միասին՝ անխելք և շահախնդիր մարդիկ են եւ այդպիսով ժողովրդին տրկութիւնից դուրս կորզողների վարկը կոտրում, ապա թմրեցնող օրօրով տրկական կեանքի հանգստութիւնը փառաբանում։ Ցոգնած ժողովուրդը, ճանապարհի մէջ տեղում շարած՝ լսում է. «ե՛տ դառնանք, վայելե՛նք մեր տրկական կեանքի բոլոր հեշտանքներ ու մեղկութիւնը»։ Իսկ միւս կողմից նրան ցնցում է յեղափոխականի ճիչը. «գնանք առաջ, շարունակենք ճանապարհը, փշոտ, տանջանքներով լի ճանապարհը, որի վերջում մենք կը գտնենք ազատ ժողովրդի հանդիստը»։

Եւ ժողովուրդը տատանվում է... Նրա միջից լսվում են ձայներ, որոնք, անապատում թափառող իսրայէլացիների նման, աղաղակում են — «չե՛նք ուզում ձեր անհասանելի և անշօշափելի ասուածուն. տուէք մեզ մեր ոսկեայ հորթը։ Զե՛նք ուզում Աւետեաց երկիրը. տուէք մեզ Եգիպտոսի սոխն ու սխտորը. հոգ չէ թէ մենք Փարաւոնի տրուկը կը լինենք»։

Հակայեղափոխականը տրկութիւն է քարոզում և ետ հրաւիրում. յեղափոխականը կոչ է անում դէպի առաջ, շարած ժողովուրդը տատանվում է, իսկ թուրքը շարունակում է իրագործել իր հայաջինջ ծրագիրը։

Ժամանակը վտանգաւոր է. ամէն մի վայրկեանը մեզ համար թանգ։ Ո՞ւր պէտք է գնայ ժողովուրդը. ե՞տ թէ առա՞ջ։ Մենք հաւատում ենք, որ նա առաջ կերթայ, միայն այն պայմանով, որ մեր յեղափոխականները շտապեն վճռողական հարուածը հասցնել մեր ներքին թշնամուն, հակայեղափոխական տարրին, որը մեզ համար աւելի ՁՈՒԱՍԱԿԱՐ և վտանգաւոր է, քան թուրքը։

ՎԱՐԴՈ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԷՇԸ

—

Հայի մէջ երկու էակ կայ՝ մարդ և հրէշ։ Մէկը մարդն է՝ ամէն լաւ, մաքուր ձգտումներ, ոգեւորութիւն, սրբութիւն ճանաչողը և նրանց իրականացնելուն ձգտողը։

Միւսը «հրէշն» է, սեւ երեսով, հայկական խոշոր քթով, լպիրշ ու դաղանական եսականութեամբ լի խառնակիչը, երկպառակութիւն սերմանողը, անմիաբանը, դաւաճանը, գարշելի կործանարարը...

«Մարդ հայը» անում է մի լաւ գործ, «հրէշը» իսկոյն ժանիքները ցցում, անասնական եսականութեամբ մոխիրը խառնում, շինած գործը քանդում եթէ նոյնիսկ դրա համար եղբայրը եղբօր դէմ զինելու, դաւաճանելու, ղշպարտելու, կեղծելու հարկ լինի...

Փաստը աչքի առաջ է։

Օրմանեան փաշայի ղղեալի անունը երկու շաբաթի չափ չէր յիշւում Վառնայի եկեղեցում։ Մի եկեղեցի էլ մի առժամանակ աղատուել էր սրբապղծելուց...

Եւ ահա մի քանի էակների մէջ «հայ-հրէշը» գարթնում է։ Նրանք գործի են ձեռնարկում։

Հրապարակային մուրացիկ դնչուներ... մի բաժանորդի համար համոզմունք ծախող ձրկնորսներ... ամէն միջոց թոյլատրելի է նրանց, միայն թէ որ եւ է լաւ ձեռնարկ փչացնեն, մոխիր խառնեն... Իսկ «հայ-հրէշը» սողալով մտնելու մարդու հոգին, նրա թուլութիւններից օգտուելու համար - խի՜ստ վարպետ է։

Տէրտէրները—փառք Աստծու—երբէք յետ չեն մնում անմաքուր քայլերից. խառնակչութիւնից։ Մի կարծէք թէ կեղծիքը շրջթունքներին պատրաստ երիտասարդ քահանաներն աւելի լաւ են, քան ծերերը... Ո՛չ, սխալում էք. բոլորն էլ միեւնոյն կաղապարից են գործած...

Պօլսի Պատրիարքարանին, կամ լաւեւս է ասել՝ որեւէ կարակալի՝ յատուկ լպիրշութեամբ «հայ-հրէշը» յունիս 6ի կիւրակի օրը «յիշել տուեց» Օրմանեանի անսուրբ անունը... Օ՜խ, յիշել տուին. քանդեցին «հայ-մարդու» շինած գործը... կերա՞ք, կաղել էիք...

Այո՛, այո՛, «հայ-հրէշը» զարթել էր մեր դնչունների մէջ.

Պէտք էր տեսնել նրանց աչքերում փայլող դաղանական ուրախութիւնը, երբ իրենց վայել պետ-փաշայի անունը մեղրածոր ձայնով բեմից յիշում էր տրուկ քահանան... Ուրախ էին, չափազանց ուրախ, որ մոխիրը խառնեցին, մի փոքրի՜կ լաւ գործ քանդեցին... լոկ հակառակորդներին իբր թէ հարուածելու համար... Ողորմելնե՜ր... դրանով ձեր հակառակորդ կարծածները բարձրացան ժողովրդի աչքում։

Իսկ ձեր միակ շահը եղաւ Օրմանեանի փառաբանուիլը։

Այսուհետեւ մենք կարող ենք հանգիստ խղճով արհամարհել թէ ձեզ և թէ ձեր «յիշել» կամ «չյիշելը»...

ԳԱՍՊԱՐ

——)·(——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 4 Յունիս

Այս անգամ թղթակցութիւնս կարճ պիտի ըլլայ, վասն զի մթնոլորտը քիչ մը ծանրաբեռնուած է այս միջոցին նոր-նոր դէպքերու բերմամբ, և անխոհեմութեան դիմողը կրնայ ծանրապէս վտանգուիլ և կորսուիլ։

Տեղական մէկ երկու հայ թերթերու մէջ գրուեցաւ, որ Վառնայի և Ֆիլիպէի եկեղեցիներուն մէջ շփոթութիւններ տեղի ունեցեր են և հոս ամէն ոք համոզուած է թէ այդ շփոթութիւնները լոկ «չյիշուիոի աղմուկներն են, որոնք ծանր հանգամանք մը ստացեր են ու հարկ է սեպուեր ոստիկանական միջամտութեան ալ դիմել։

Այս ամէնը Օրմանեան էֆէնտիին տեղեկագրուած է. սակայն հոգը չէ, վասն զի լաւ գիտէ թէ Պոլսոյ մէջ այդ կարգի ցոյցեր չեն կրնար ըլլալիլ և դինքն վար առնելու ալ «ճարը» չկայ. իսկ արտասահմանի ժողովուրդին ցոյցե՞րը... է՜հ, չէ՞ մի որ անոնց ըրածը չճանչցողը զանոնք ալ մինչեւ չճանչնալու աստիճան առաջ կրնայ երթալ։

Այսուհանդերձ Պոլսոյ ժողովուրդը որքան որ կապուած ու կաշկանդուած ըլլալով չկրնար գժգոհութեան ցոյցեր պատրաստել և աղմուկ հանել, սակայն շատ գոհ է որ արտասահմանի արենակիցները կը ճանչնան իրենց պարտականութիւնը և կը պատժեն Օրմանեանի նման վատերը՝ արգիլելով անոնց յիշատակութիւնը Պատարագի խորհուրդին մէջ, որմէ կախում ունի պատրիարքի մը իշխանութեան տեւողութիւնը։

Պոլսոյ մէջ լսողը ցաւած և կատղած է այն հեռագրին համար, որ Լահէ ղրկեց Օրմանեան։ Իրեն հարցնողներուն ամենայն լրբութեամբ կը պատասխանէ. «պարտաւորուած էի այսպէս ընել Թուրքիոյ հայերը արդարացնելու համար». արդեօք չէ՞ր կրնար հրաժարիլ և չգործադրել այսքան զզուելի արարք մը որ զմեզ կը խայտառակէ ամբողջ աշխարհի առաջ։

Ի՞նչ պիտի ըսեն հիմա Լահէ գումարուած Վեհաժողովի անդամները, որոնց իւրաքանչիւրը հազարաւոր ժողովուրդներ կը ներկայացնէ, երբ տեսնեն թէ մարտիրոս ազգի մը արդար դատը խնդրոյ առարկայ ընելու ճիգին մէջ, նոյն ազգին պետը հակառակը կը հեռագրէ։ Ո՞ր ատաճանի անկում մըն է այս ազգի մը բարոյականին. «հերիք չեղա՞ւ մինչեւ հիմա բրած սինլքոր և ճիղուիթական արարքները ու դեռ պիտի շարունակէ այս մարդը» կը հարցնէ Թուրքիոյ հայութիւնը իր տարակայ եղբայրներուն, որոնք ամէն դիւրութիւն կրնան ունենալ ոեւ իցէ կերպով մը այս խայտառակութիւններուն վերջ մը դնելու։

Հիմակ ալ ելեր Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը կը յուզէ և ոտքով գլխով եռուէն ինկեր է լուծելու համար։

Հազիւ թէ այսպէս կամ այնպէս դարձնելով այդ վերաքննութեան խնդիրը յետաձգուեցաւ և ահա նորէն մէջ տեղ կելնէ, որուն պիտի հետեւի ապահովաբար իրական և վերջնական «ոչնչացումը» մեր ձեռքը մնացած այդ մէկ հատիկ օրէնքին։

Ասիկա սոսկալի բան է. պարզ անհատի մը ներելի չեղած մէկ ընթացքը պատրիարքի մը նե՞ր-ել և թողուլ որ անպատի՞ժ մնայ...։

Այս օրերս Սալիէէն «թէզքէրէ» մը եկաւ վերաքննութիւնը աւարտելու համար, որովհետեւ վարչութիւնը խնդիր ըրած էր իր պաշտօնի պայմանաժամին լրացած ըլլալը։ Կառավարութիւնը կըսէ. «Սահմանադրութեան վերաքննութիւնը աւարտեցէք և այնպէս քաշուեցէք»։ Պատրիարքին ալ ուղածը այս եղած է, նախ գոհացում մը տալու Դրան և երկրորդ՝ Կրօնական ժողովը գլխէն վանելու համար։

Խառն ժողովոյ վերջին նստին մէջ երկար վիճաբանութիւն մը եղաւ. կրօնականները ըսին թէ «իրենց պայմանաժամը լրացած է և յաջորդ վարչութիւնը թող շարունակէ վերաքննութիւնը»։ Պատրիարքը հակառակը կը պնդէ և կուզէ որ ժամ առաջ աւարտի այն. ասի իր դիրքն ալ հաստատելու պիտի ծառայէ կառավարութեան հանդէպ, ինչպէս որ ազգին ալ համակրութիւնը շահելու համար Ազարեանի ասկէց առաջ գրած տետրակին դէմ բան մը գրեց։

Ուրիշ խորհուրդ մըն ալ յղացած է մեր Օրմանեան էֆէնտին, որ կամաց կամաց «ազգ»ի կարգը պիտի անցնի՝ հաւասարելու համար Դրան «օտաճի»ներուն. տեսնելով որ վերաքննութեան գործը Կրօնական ժողովի արդի անդամներով չպիտի կրնայ քալեցնել, Դուրեան և Այվազեան եպիսկոպոսները իրեն օժանդակ պիտի առնէ, որպէսզի կամքը քալեցնէ։

Կը տեսնէ՞ք հիմա, արտասահմանի հայեր, ինչ օրերու հասած ենք։

ՄԺՂՈՒԿ

Թաւրիզ, 14 Մայիս

Սալմասի վիճակը

Սալմասի ներկայ դրութեան մասին մի կարճ տեղեկութիւն տուել էի անցեալ անգամ և յայտնել, թէ հայերի մէջ ռուսադաւան լինելու մի շարժում է սկսվել։ Այս անգամ ուրախ եմ աւետելու, որ Այվատեան Սրբազանի աղդու ջանքերի շնորհիւ այդ շարժումը դադարած է և դաւանափոխութեան որեւէ դէպք տեղի չէ ունեցել։ Այս անպատաւաբեր շարժման՝ բուն շարժառիթներն էին պարսիկ պաշտօնեաների գործադրած անխիղճ կեղեքումները և չափազանց կաշառակերութիւնը. սակայն այժմ մասամբ վերացել են այդ շարժառիթներն ու պատճառները, որովհետեւ Սրբազան առաջնորդի խիստ բողոքների և աշխուրջ ջանքերի շնորհիւ պաշտօնանկ եղաւ Սալմասի դատաւոր Միրզա Հուսէյին խանը և սէրիֆէրէստներից եւս առնվեց հայերից բռնի խլված 90 թումանի չափ կաշառքը։

Պարսկաստանում մինչեւ օրս այդպիսի բան չէր տեսնված. կաշառք ուտող պաշտօնեայից յետ պահանջել ու առնել տրված կաշա՞ռքը, մանաւանդ մի հայի՛ կողմից տրված կաշառքը։ Այս դէպքը անկասկած իր բարերար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԷ ԾԱՂՐԱԾՈՒԹԻՒՆ

—

«Ջուր պղտորողը» վերնագրով մեր նախընթաց երկու յօդուածներում մենք տեսանք, թէ որքան կեղծելու, ստելու եւ բամբասելու ընդունակ են Զօպանեանները եւ նրանց նման մարդիկ։

Դիտեմ, համոզուած եմ, որ դրանց նպատակը չէ «ներկան» վերնագրով յօդուածների միջոցով պարզել այս ու այն սկզբունքը, լուսաբանել որ եւէ հասարակական երեւոյթ... նրանց նպատակն է անուանարկել, վարկաբեկել այս կամ այն կուսակցութիւնը, այս ու այն անձը. նրանց նպատակն է «ջուրը պղտորել», որ աւելի դիւրին լինի «ձուկ որսալը»։

Ուրեմն՝ անկեղծութիւնը բացակայ է։ Բայց ենթադրենք մի րոպէ, որ դրանք բոլորն էլ անկեղծ, աղնիւ մարդիկ են. որ նրանք գրում են «պատասխանատուութիւններ», «ներկան», Նիւ-Եօրքի «Հայրենիք» թերթի Դոկտոր Արշակունու յօդուածները եւ այլ նման գործեր իսկական ճշմարտութիւնը գտնելու, ժողովրդի մտաւոր աչքերը բանալու համար։

Այդ էլ ենթադրենք։

Այժմ դիմենք արմատական հարցի քննութեան։

* * *

Ի՞նչ են ուզում դրանք. ի՞նչ վայնասուն են բարձրացրել. ի՞նչ պատասխանատուներ են որոնում. ի՞նչ ծրագիրներ են առաջարկում հային ազատութեան գիրկը տանելու համար։

Եւ զարմանալի ճշմարտութիւններ են գտնում այդ պարոնները. իսկական կոլումբոսներ՝ նոր Ամերիկա գտնողներ։

Պէտք է «խելացի կերպով ապստամբութիւն մը պատրաստել», պէտք է «ներքին զօրեղ ուժ մը գոյացնել», պէտք է «խելացի ծրագրով մը խելացի կազմակերպութիւն մը ձեռք բերել»։

Ի հարկէ պէտք է. ո՞վ իր աչքը կոյր կուզէ։ Ինչո՞ւ միայն այդ քանն է պէտք։ Պէրք է նա եւ թընդանօթ, միարայլեազ, կանոնաւոր զօրք, միլիոններով ոսկի... պէտք են հանճարեղ կազմակերպողներ, ռազմագէտներ, զինուորական էնժէնիօրներ... ամուր բերդեր, ռազմամթերք, պատերազմական նաւ... վարժ կուռողներ... չա՞տ ու շատ բան պէտք է. ո՞ր մէկն ասեմ։

Եւ պէտք է ձգտիլ այդ ամէնը ձեռք բերել զգոյշ, խոհեմ ճանապարհով։

Պէտք է. դրա դէմ կասկած չունիմ։ Բայց կարելի՞ է արդեօք։ Հազար տարի դու պնդիր, որ պէտք է ճանապարհ դէպի լուսինը. բայց որ այժմ անհնար է... ի՞նչ կարող ես անել։

Պարոններ, դուք ասում էք, որ պէտք է մի ուժեղ եւ խելացի կերպով կազմուած ապստամբութիւն։ Համաձայն եմ։

Ո՞ր տեղից կը գտնէք վարժ կռուող ուժեր։ Մի՞թէ կարծում էք, թէ դարերով ստրկացած հայի զաւակը մի անգամից կարող է զինուոր դառնալ, զէնք գործածել... Շա՞տ է տեսնուած, որ ամենաթաց հանաչուած խմբեր փախել են քրդերի երեւալուն պէս, զէնքերը վայր նետել ու փախել... Մի՞թէ կարող ենք մեղադրել նրանց։ Նրանք զէնք նոր տեսած, ստրուկ ծնած, ստրկի կաթ ծծած, «ազա ոտքդ պագնեմ» ով մեծացած մարդիկ են եղել...

Քա՞նի հազար լաւ կուռողներ կը հանէք ամբողջ հայութեան միջից... կասկածում եմ խոշոր թւերի մասին։ Բացի 2—3 լեռնական կիսանկախ տեղերից ուրիշ ո՞ր ունինք մենք զէնքի վարժուած անձեր...

Այո՛, պէտք է ձգտիլ խոշոր ապստամբութեան, բայց պէտք է նախօրոք պատրաստել վարժ, եփուած կուռողներ։

Իսկ դրան կարելի է հասնել մանրիկ հայդուկային խմբերով, վարժութեան համար կազմակերպուած բազմաթիւ խմբակներով։

Ապստամբութիւնը կազմ ու պատրաստ երկնքից վայր չի ընկնում մանանայի նման, այլ ժամանակի ընթացքում՝ բազմաթիւ զոհերով ու մանրիկ փորձերով է առաջանում։

Զոհերը շատ են լինում, այդ մենք գիտենք. բայց ուրիշ ճանապարհ չկայ... այդ էլ գոնէ դուք իմացէք Պ. Պ. Զօպանեաններ, ազգ. Արշակունիներ եւ ընկ.։

Եթէ հնար լինէր հաշուել այն բոլոր զոհերը, որ տուել են ազատութեան ձգտող մարդկային ցեղերը... թերեւս միլիարդների հասնէր... իսկ եթէ ազատութեան համար երկրագունդիս վրայ թափուած բոլոր արիւնը հաւաքելու ճար լինէր՝ ամբողջ ովկիանոս կը կազմէր, որ կարող էր այխարհներ հեղեղել...

Եւ արդեօք միայն Հայե՞րս ենք մեծ կորուստներ ունեցել։ Ո՛չ, սխալ է, բացարձակ սխալ այդ կարծիքը. նա արդիւնք է լոկ տգիտութեան։ Յունաստանը ԺԸ. դարի վերջերից, ժէներալ Իպսիլանտիի շարժման օրերից սկսած մինչեւ Միսոլոնգիի հերոսական դիմադրութիւնը եւ անկումը տասնեակ ու հարիւր հազարներով զոհեր տուեց։ Միսոլոնգիի անկումից յետոյ ամբողջ Եւրոպան պնդում էր, թէ «Յունաստանը մի մեծ գերեզ-

ալդեցութիւնը կունենայ. յաջողդող պաշտօնեաները, այս դէպքից խրատված, անշուշտ մի քիչ զգոյշ պիտի վարվին, տեղի չը տալու համար Սրբազան առաջնորդի բողոքներին։ Այս դէպքը և դատաւորի պաշտօնանկութիւնը այն աստիճան խոր տպաւորութիւն են գործել Սալմաստի միւս պաշտօնեաների վրայ, որ երբ հայերի հետ գործ են ունենում, խնդրում են, որ այդ գործը հաշտարար կերպով վերջացնեն և «խալիֆային» (առաջնորդ) իմաց չը տան.՝.՝.՝.՝.՝.

Այս ցոյց է տալիս Այվատեան Սրբազանի նպատակայարմար և միջավայրի պահանջների համաձայն աշխուրջ և ազդու գործունէութիւնը։ Ղալա թաղի մեր կեղծաւոր և խաւարամիտ ուսուցիչները և նրանց համախոհ պղտոր ջրում ձուկ որսացող արբանեակները չեն ուզում տեսնել Սրբազան առաջնորդի այս յաջողութիւնները, և համարձակվում են ուստ սահի վրայ բարդելով Թիֆլիսի փողոցային և վարկը ընկած «Նոր-Դար» թերթում ճահճային և ներիչ պղպջակներ դուրս տալ։

Այվատեան Սրբազան այս շաբաթ պէտք է վիճակային այցելութիւններ կատարէ և մօտից ծանօթանայ Ուրմիայի և Սալմաստի հայերի վիճակների հետ և նրանց բարօրութեան համար ղանազան կրթական և այլ տնօրինութիւններ անէ։

ՄԻՐԶԱ.

Սոֆիա 4, Յունիս

Շարժումի 126 թիւը տեղւոյս «մեծամեծներուն» կողմէ խիստ զայրոյթով մը ընդունուեցաւ Սոֆիայէ գրած մէկ թղթակցութեանս առթիւ։ Ժողովրդին օգուտը ուզելնուս համար զիս «խառնակիչ եւ անկրօն» հրատարակեցին՝ առանց ճանչնալու. իսկ Շարժումի խմբագրութիւնը անշնորհիւ եւ այլ ածականներով մկրտեցին։ Մինչդեռ անդին՝ սխալը քննող մեծամասնութիւնը՝ որ ժողովուրդ կը կոչուի, ամենայն ուրախութեամբ կարդաց այդ թիւը։

Այժմ կուզամ ուրախ սրտով արձանագրելու, որ հասարակական քննադատութիւնը իր բարերար դերը կատարեց։ Շարժումի յիշեալ թիւի երեւալէն ետքը՝ ձգեցին մեր աղաները եկեղեցին, ժողովներ կազմեցին, քանի մը բարեսէր ազգայիններ հրաւիրեցին, տխնեցան, աշխատեցան ու գործով ցոյցին, թէ իրենք ալ հայ են եւ ազգային եռանդ ունին։ Այս անուրանալի է եւ անոնց վերջին ջանքերը խիստ գովեստի արժանի։

Այդ ջանքերու արդիւնքը եղաւ մայիս 29ի փառաւոր նուագահանդէսը, որի մասին արդէն գրուած է։

Զէ, ալ ոչ ոք իրաւունք ունի թաղ. Խորհրդի պատուարժան անդամոց բան մը ըսել, քանի որ նուագահանդէսը եղաւ. վարժարանն ալ դրին իր կանոնաւոր ընթացքին մէջ. օրը 8 ժամ կանոնաւոր դասախօսութիւն կըլլայ։ Ակէ աւելին. գովելի եռանդով մը որբերու համար Յունվարին սպագրուած ընկալագրերն ալ չրջաբերութեան դրին։

Քանի որ այդ պարոնները վերջերս իրենց բոլոր ջանքերնին թափեցին իրենց ազգային պարտականութիւնները բարեխղճաբար կատարելու՝ պարզ է ուրեմն, որ Շարժումի խմբագրութեան եւ իմ դէմ արձակած հայհոյութիւններն ալ վայրկենական գրգիռի մը արդիւնք էր, ուրեմն եւ ուշադրութեան առնելու չէ... այս ամէնը այն պայմանով, եթէ ապրելս չի թերանան իրենց կոչման մէջ։

* * *

Քանի մը խօսք ալ Արիստակէսին։ Տէր հայր, այդչափ վախկոտ պահպանողականութիւնը ալէկ բան մը չէ։ Մայիս 30ին հակառակ դպիրներուդ միջոցով ձեզի ըրուած ազդարարութեան՝ չյիշել Օրմանեանի վատ անունը՝ դուք նորէն վիրաւորեցիք մեր ամէնուս ազգային սուրբ զգացմունքները... լա՞ւ կըլլայ, եթէ եկեղեցւոյ արարողութեան ատեն խառնաշփոթութիւններ ծագին։

Այս անգամ ձեզի այսչափը կըսենք...

Ս. Ֆ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Տեղական անիրաւ թերթի մը մէջ Մ. Ա. ատորագրութիւնը կրող յօդուած մը՝ անտեղի սոփեստութիւններով ու սուտերով կը ջանայ պաշտպան հանդիսանալ հաճի աղային... Թերեւս և Օրմանեանին...

Ի՞նչ «թագուն նպատակ մը» կրնամ ունենալ տեղացի և գաղթական հայերու մէջ գրգռում առաջացնելով։ Ատանկ «թագուն նպատակներ» Մ. Ա.երը և կեղծարար գնչուները կրնան ունենալ։

Ազգային արժանապատուութեան քի՛չ մը նախանձախնդիր հայ մը ի՞նչպէս կրնայ անտարբեր ըլլալ «Ազգային պատիւը» վիրաւորող լուտանքներու առջեւ։ Սահմանադրական երկրի մը մէջ լուսաւորչական էապէս սահմանադրական եկեղեցի մը ի՞նչպէս կրնայ աղայի մը կալուածը նկատուիլ։ Եւ երբ մեր եկեղեցական օրէնքը եկեղեցւոյն վարչական գործն այնքան բացայայտ կերպով ժողովրդին ձեռաց մէջ կը դնէ՝ ի՞նչպէս կը համարձակին Մ. Ա.ի պէս մարդով աղքատներ յանձնարարել հայ ժողովուրդին, որ կանխաւ երթայինք ու այսինչ կամ այնինչ ազգային հաւանութիւնը խնդրէինք զաղիր դատաճանի մը անունը եկեղեցիէն վանելու համար։

Հաճի-աղան, այո՛, մեզի խի՞ստ «խոհեմ խրատներ» տուաւ։ «Վուրուն, տիշարը աթը, տէօյիւն Սթանպօլա ճէհէննէմ օլուն» ըսաւ մեզի... Լա՜ւ խրատ է, ըսելիք չունիմ... Եւ արդէն Մ. Ա. կատարելապէս խոստովանած կըլլայ ազգային այդ խօսքերը, երբ կը յարէ թէ՝ մեծ փորձանքէ մը ազատած էի, երբ եկեղեցւոյ բակէն հեռացայ։

Ցիշեալ յօդուածի ամէն կէտերը ակներեւ կը ցուցնեն, թէ անոր հեղինակը հաճի-աղային պարզապէս հաճելի երեւնալու և անոր շնորհները վայելելու համար է շարժեր իր կեղծարար գրիչը։ Ուրեմն՝ անիկա հաճոյանալու ձգտող մոխիր խառնող մըն է և չարժեր անով զբաղիլ այլ եւս։

Ա.

Վառնա, 8 Յունիս

ՆԱՄԱԿԱՑՈՒԹ

—

Մեր գործակալներէն ու բաժանորդներէն խմբագրութիւնս կը խնդրէ փութացնել բաժնեդիներու առաքումը։

Պատպեալ պիտի հրատարակենք չի վճարողներու անունները։

——)·(——

մանատուն է. պէտք է խաչ դնել յունական խնդրի վրայ»։ Կրէտէի քաշած նեղութիւններն ու կրած ջարդերը 50 տարի թուերից մինչեւ մեր օրերը չատ էլ յետ չեն մնում մեր քաշածներից... թէ եւ Կրէտէի ազգարնակութեան ճնշող մեծամասնութիւնը յոյն կրէտացիներն են։ Իսկ «Բուլղարական տեսարանները». մի՞թէ Բուլղարները քիչ քաշեցին. քիչ կոտորեցան, քիչ փչացան...

Հայկական պայմաններն աւելի աննպաստ են, աւելի խայտառակ՝ ուրեմն Հայերիս կորուստն էլ համեմատաբար աւելի պէտք է լինէր։ Վստահելի թուեր չկան, որ համեմատութիւն կարելի լինի անել։ Իսկ հրապարակի վրայ պատող 2—300,000 թուերը ի՞նչ չափազանցած են։

* * *

Անհամեմատ աւելի խելացի կը լինէր համեմատել մեր շարժումը Մակեդոնական շարժման հետ. եթէ ոչ «պէտք է այս, պէտ է այն» ցանկալիութեան սահմանների մէջ միայն դարձող «աղւորիկ ֆրազները» ոչինչ չեն կարող պարզել։

Այդպէս էլ անում է Պ. Զօպանեան իր «Ներկան» յօդուածի մէջ, միայն լոկ բառերով, առանց որ եւ է փաստի։

«Մակեդոնացիք... մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ յիմարութիւն չգործեցին»։ Եւ ի՞նչն է Պ. Զ.ի կարծիքով յիմարութիւն։ Պարզ է. «յախուռն շարժումներով ջարդուելու ենթարկուիլ»ը եւ մէկ էլ՝ «գործելու անքարոյական մեթոդը որով գործիչներ գողունի կը մտնեն Վան կամ ուրէք քաղաք մը, դէպք մը կը բռնկցնեն, ու կը փախչին, թողով որ ժողովուրդը ջարդուի»... Զակերտների մէջ առած այս երկու մաքերը «յիմարութիւն»ներ են Պ. Զ.ի կարծիքով։

Եթէ սա անկեղծ է, ուրեմն չափազանց սեւ տգիտութեան արդիւնք է։

«Մակեդոնացիք մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ յիմարութիւն չգործեցին»։

Ահա մի հիմնական սխալ, մի բացարձակ տգիտութիւն Պ. Զ.ի կողմից։ Այն ամէնը, ինչ Պ. Զ.ի կողմից «յիմարութիւն» է համարւում, չգործեցին, եւ՝ մենէ չատ աւելի ուժ ունենալով հանդերձ՝ կը սպասեն, որովհետեւ կըմբռնեն թէ քաղաքականութիւնը աննպաստ է իրենց եւ չեն ուզեր յախուռն շարժումներով ջարդուելու ենթարկուիլ», ասում է Պ. Զ. «զգմատիք» ոճով, առանց որ եւ է փաստի։ Քննենք այդ։

Մենք արդէն մի անգամ ընդ միշտ ենթադրել ենք, որ «Զօպանեան, տօքթ. Արշակունի եւ ընկ.» անկեղծ են եւ ուրեմն իրենց ամէն ասածներին կատարեալ հաւատ են ընծայում իրենք էլ։

«Մակեդոնացիք... մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ յիմարութիւն չգործեցին»։ Եւ ի՞նչն է Պ. Զ.ի կարծիքով յիմարութիւն։ Պարզ է. «յախուռն շարժումներով ջարդուելու ենթարկուիլ»ը եւ մէկ էլ՝ «գործելու անքարոյական մեթոդը որով գործիչներ գողունի կը մտնեն Վան կամ ուրէք քաղաք մը, դէպք մը կը բռնկցնեն, ու կը փախչին, թողով որ ժողովուրդը ջարդուի»... Զակերտների մէջ առած այս երկու մաքերը «յիմարութիւն»ներ են Պ. Զ.ի կարծիքով։

Եթէ սա անկեղծ է, ուրեմն չափազանց սեւ տգիտութեան արդիւնք է։

«Մակեդոնացիք մինչեւ այս վայրկեանս ոչ մէկ յիմարութիւն չգործեցին»։

Ահա մի հիմնական սխալ, մի բացարձակ տգիտութիւն Պ. Զ.ի կողմից։ Այն ամէնը, ինչ Պ. Զ.ի կողմից «յիմարութիւն» է համարւում, 95 թուից դէս չա՛տ անգամ արել են Մակեդոնացիք եւ դեռ անում են այս օր էլ։

Պարոններ, մի գրէք այն խնդիրների մասին, որոնցից ոչ մի տեղեկութիւն չունէք։

Ահա մի քանի փաստեր Մակեդոնացիների արած «յիմարութեան» Զոպանեանի կարծիքով, իսկ ըստ մեզ՝ նրանց խելացի յեղափոխական քայլերի։

1. 1895ին Մութաֆովի առաջնորդութեամբ մի հայդուկային խումբ կամ «չետա» Բուլղարիայից անցաւ Ստրումիցա գաւառը, բազմաթիւ ընդհարումներ ունեցաւ ոստիկանութեան ու զօրքերի հետ. երկու սպաներ ընկան խմբից... վերջը խումբը յետ «փախաւ» Բուլղարիա, իսկ տուժողը եղաւ Ստրումիցայի ազգաբնակութիւնը. բազմաթիւ սպանութիւններ, անվերջ ձերբակալութիւններ, թալան, հրդեհ... ամբողջ գիւղեր աւերուեցան եւայլն։

2. 1995ին Դաւիդով ենթասպայի առաջնորդութեամբ, 100 հոգուց կազմուած մի չետա անցաւ սահմանը, յարձակուեց Դօսպատ գիւղի վրայ, որի բնակիչները մահմեդական բուլղարներ էին՝ աւելի վատ քան Թուրքերը՝ հիմնայատակ կործանեց գիւղը եւ «փախաւ»... գօրքը եւ խուժանը յարձակուեցան չրջակայ 10—12 Բուլղար գիւղերի վրայ, բնակիչներին կոտորեցին, բանտարկեցին, թալանեցին եւայլն։ Մի քանի Բուլղար գիւղեր աւերակ դարձան...

3. Նոյն թուին Սարաֆով անուն մի երիտասարդ ենթասպայ 40—50 հոգով Մելնիկ մեծ աւանը առաւ. զատին, գայմազամը, միւտիւրը եւ բոլոր պաշտօնեաները բանը նետեց. մի օր միայն Բուլղարական դրօշակը ծածանեց Մելնիկի վրայ։ Երկրորդ օրը Սարաֆովի խումբը, ըստ Պ. Զ.ի անպարկեշտ ոճի՝ «փախաւ»։ Հետեւանքը եղաւ մելնիկցիների անվերջ կողոպուտը, թալանը, սպանութիւնները, անհամար տանջանքները...

4. 1896ին Շչիպ քաղաքում Թուրքերն սպանեցին մի Բուլղարի։ Քաղաքացիք վրդովուեցին։ Վերցրին դիակը, «զօնախ» տարան եւ միաբերան սկսեցին պօռալ. «ա՞յս է ձեր բարեկարգումը»։ Վարչութիւնը փորձեց ցրել ժողովուրդը։ Մի քանի հոգի սպանուեցան, բայց ամբոխը չցրուեցաւ։ Քաղաքը դրուեցաւ զինուորական դրութեան մէջ. ամէն տուն զինուորներ էին լցուած։ Բռնաբարութիւն, գողութիւն, սրբապղծութիւն, սպանութիւններ՝ ամէն օր կային։ Խառնակութեան գլխաւորներին բանտ տարան։ Այս անգամ կանայք ժողովեցան, ընկան վարչութեան չէնքերի վրայ, ազատեցին այրերին։ Մի հատ դաւաճան չերեւաց Բուլղարների միջից... եթէ 95ի Հայկական ջարդերը չլինէին, անպատճառ մի խոշոր խմբական ջարդ կը լինէր այնտեղ...

ԴԱՍՊԱՐ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսէն Մայիս 30ին կը հեռագրեն «Բայխապօթ»ի. Սամաթիոյ հայոց աղջկանց վարժարանին մէջ հեռաւեալ կոչը պատերուն փակցուեցաւ. «ոտքի ելլալու վայրկեանը եկած է։ Կրէտէի հարցը վճռուած է։ 300,000 Հայերու արիւնը չի կրնար մոռցուիլ։ Հայեր, ոտքի ելէք»։ Կը կարծուի որ ասիկա կեղծիք մը կամ գրգռիչ գործակալի մը (աժան բռովագդէօռ) ըրածն է։ Բազմաթիւ անձեր ձերբակալուեցան, որոնցմէ մէկ քանին նորէն ազատ արձակուեցան։

—Կ. Պոլսէն յունիս 2ին կը հեռագրեն նոյն թերթին. Պիթլիսի վիլայէթի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերու և անոնց մասին հոս պատերուն վրայ փակցուած գաղտնի յայտարարութիւններու պատճառով՝ տեղի ունեցան հոս բնակուող բազմաթիւ գաւառացի հայերու ձերբակալութիւններ, անոնցմէ շատերը հայրենիք ղրկուեցան։

—Պոլսէն յունիս 2ին «Թանի»ի կը հեռագրեն. «Մուշի կառավարիչը ձերբակալուեցաւ և ղինուորներով Պոլիս բերուեցաւ, որ պատասխանէ քիւրտերու կողմէն Հայերու դէմ ըրած վերջին դէպքերու համար»։

—«Թայմզ»ի Պոլսոյ թղթակիցը կը գրէ, որ Բիրնաշէրի (արդեօք Իռնաշէ՞ն...) մենաստանի վանահօր քիւրտերու ձեռքով սպաննուելէն առաջ և ետքը ծանր խառնակութիւններ են տեղի ունեցեր։ Երկու միաբաններ սպաննուեր են, վեց գիւղեր կողոպտուեր և այրուեր, բազմաթիւ բնակիչներ կոտորուեր են։

—Ալաշկերտի Ամատ գիւղէն քանի մը հայեր, քիւրտ պէյի մը բռնի սպառնալիքներէն ստիպեալ՝ կանցնին ռուսական սահմանը Կաղզվանի քովերը և կը սկսին անտառէն փայտ կտրել, որ տանին բռնակալ պէյին։ Անտառապահ ռուս զինուորները կիմանան, կը յարձակին անոնց վրայ։ Յարձակման առեն մէկ գոմէշ և չորս եզ կը սպանուին ու կը վիրաւորուին, իսկ երկու հայ, մի քիւրտ 12 եղերով հանդերձ կը ձերբակալուին և Կաղզվան կը տարուին։ Հայերու հետ եղած քիւրտը բռնակալ պէյի գործակալն է, որ այժմ բայներու հետ մէկտեղ Կաղզվանի բանտն է։

Անտառապետի հետ կայացեր է համաձայնութիւն մը, որի հիման վրայ հայերը պէտք է վճարեն 100 բուպլի կամ 12 օտմ. ոսկի, որպէսզի ազատ արձակուին։ Բայց անտառապետը 100 բուպլին առնելով՝ գործը յանձնած է մաքսատան կառավարչին, որ այժմ իր կողմէն նոր պահանջներ կընէ ձերբակալուած հայերէն...

Այսպէս հայը կը թալնուի և Թուրքիոյ և Ռուսիոյ մէջ։

—Բեդերսպուրգի Արեւալագիտական ճեմարանի բրոֆէսօր երիտասարդ գիտնական Մառ մայիս 23ին նոյն քաղաքի համալսարանի մէջ Մագիստրոսի տիտղոսը ստանալու համար պաշտպանեց այդ առթիւ իր ներկայացուցած շարադրութիւնը հայոց միջնադարեան գրականութեան առակախօսութեան ճիւղին վրայ։ Հայասէր գիտնականի շարադրութիւնը քննադատելու համար նշանակուած պաշտօնական անձը՝ արեւելագէտ բրոֆէսօր Օլսէնպուրկ՝ խիստ գովեստով խօսեցաւ Մառի գործին վրայ։ Համալսարանը միաձայն որոշումով մը արժան դատեց պսակել պարոնը «Մագիստրոս հայ գրականութեան» տիտղոսով։

Մառը չատ լաւ գիտէ հայերէն թէ հին և թէ նոր լեզուները։

—Մեր ծանուցումներու մէջ ընթերցողը պիտի դանէ Վանայ սովեալներուն ի նպաստ տրուելիք երկրորդ ներկայացման լուրը։ Մենք կը ցանկայինք որ Վառնայի հայերը սրտի բերկրանքով երթային այդ ներկայացման։ Նպատակը սուրբ է և գովելի, իսկ ներկայացման նիւթը հիանալի։ Ուրեմն և ազգային բարի գործ մը և հոգեկան մաքուր զուարճութիւն մը. ալ ինչո՞ւ չերթալ...

Տոմսակները այս անգամ տուներ չպէտք է ղրկուին։ Այդ սովորութիւնը միայն կիսակիրթ ու տգէտ հասարակութիւններուն է յատուկ... և քիչ մըն ալ անվայելել է «բռնի զուարճութեան հրաւիրել» մարդը։ Տեսնանք աստ՝ դամ թէ որքան Վառնայի հայ հասարակութիւնը թատրոնի ճաշակ ունի և թէ առանց ստիպման պէտք է տոմսակներ գնէ՞ թէ ոչ։

—Կը լսենք, որ տեղւոյս Աւետարանականներու ժողովարանի մէջ այս չորեքշաբթի երեկոյ ունկնդիրներուն տեղեկութիւններ պէտք է տրուին Վանէն և եկած քանի մը նամակները կարդացուին։ Բանախօսողը պէտք է Տ. Շահվէլէտեան ըլլայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ. — Հրեայները կազմած են «Սիօնիստ» անուն ընկերութիւն մը որու նպատակն է աշխարհի ամէն կողմերէն հալածուող հրէից ազգը ժողուել Պաղեստինի մէջ և ետքէն ձգտիլ հրէական անկախ պետութիւն մը ձեռք բերելու։ Այդ նպատակով Ռուսիոյ, Գերմանիոյ, Աւստրիոյ մէջ յայտնի և գաղտնի բազմաթիւ կոմիտէներ են հիմնուած, որ ստակներ կը գանձեն և ընտանիքներ կը ղրկեն Պաղեստին՝ դիւղեր ու ատաններ հիմնելու։ Պէյրութի Ամերիկեան հիւպատոսի տուած տեղեկութեանը նայելով՝ հրեայներու թիւը, որ առաջ չատ չնչին էր, այժմ կը հասնի 40,000ի։ 960 ընտանիքներ, որ բաժնուած են 22 գաղութներու մէջ, օգնութիւն կստանան Եւրոպական հրեայ ընկերութիւններէ։ Սիօնականներու շարժումը հրեայներու թիւը արագ կաճեցնէ հոն։ Սուլթանի կառավարութիւնը կը խրախուսէ սիօնիզմը, բայց երկրի հարկերու դժոխային ծանրութիւնը և փճացած պաշտօնեայներու կաշառակերութիւնը խիստ կը խանգարեն այդ հասարակութեան զարգացումը։

—Ենիշէի գաւառի դրամարկղի մէջ 25,000 դահեկանի բաց մը է նշմարուեր։ Դանձապետ Հաքիզ Մէհմէտ էֆէնտին և շրջանի եկամուտներու տեսուչը, որ հաւասարապէս մեղադրուած է գողութեան մէջ՝ դատի են ենթարկուեր և պաշտօնանկ եղեր։

Բարենորոգում է ասիկա. միլիոններ գողցողներն ազատ են, պատիւներ կստանան, անօթիներն ու չնչին գողերը կը պատժուին։

—Ալպանական Սկիւթարիէն կը հաղորդեն, որ ձերբակալուած են երկու անձեր կեղծ անցագիրներով։ Ատոնք աւազակային խմբի մը անդամներն էին, որ Տէմիր-Գաբուի քովերը երկաթուղիի պաշտօնեայ մը բռներ են և երկու ժանտարմներ սպաններ են։

—Սալոնիքէ Մայիս 31ին կը հեռագրեն Պոլսոյ «Մոնիդէօռ Օրիանդալ» թերթին. «աւազակները փախուցին Տ. Շվալիէն, Քասանտրայի հանքերու ընդհանուր տեսուչը։ Անոր ծառան սպաննուեցաւ, երբ կուզէր զայն պաշտպանել։ Իշխանութիւնը միջոցներ է ձեռք առեր չարագործները բռնելու։ Աւազակները 15,000 թրքական ոսկի փրկանք կուզեն՝ ազատ արձակելու համար»։

—Թուրք կառավարութիւնը վճռած է Կրէտէէն դաղթած մահմետականները ղրկել բնակելու Անկիւրայի, Գոնեայի, Աստանայի, Դամասկոսի, Հալէպի և Գարահիսարի գաւառները։ Տեղացի քրիստոնեայներուն աչքը լոյս։

—Ահմէտ Բիզա, Երիտասարդ Թուրքերու ներկայացուցիչը, վերջերս Լահէյ հասնելով՝ ներկայացուցեր է Խաղ. Ժողովի անդամներուն յիշատակագիր մը, որու մէջ պարզեր է Երիտասարդ Թուրքերու պահանջները. հերքելով այն մեղադրանքը, թէ իրենք յեղափոխականներ են՝ յանուն խաղաղութեան և արդարութեան կը պահանջէ Օթոման կայսրութեան մէջ զոյութիւն ունեցող, բայց անդործադրելի մնացած օրէնքներու էական գործադրութիւնը։

Ու դեռ հաւատացողներ կան թէ հարեմի ծնունդները կրնան յեղափոխական ըլլալ...

ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ Ի ՆՊԱՍՏ

Վանայ Սովեալներու

—

Ժողովրդի ցանկութիւնով կը խաղացուի երկրորդ անգամ ՎԱՆԱՑ ՀԱՑԴՈՒԿՆԵՐ (սրբագրեալ), Յունիս 26ին, շաբաթ օրը, Անկէլ Սլավօֆի սրահին մէջ։

Գիները չափաւոր. 50 սանթիմէ մինչեւ 5 ֆրանք տոմսակներ։

Տոմսերը վճռուած է տուներ չղրկել. ցանկացողները կարող են դնել Տ. Յովսէփ Բարսամեանի վաճառատունէն։

Ելեւմուտքի վերահսկող յանձնախումբը բաղկացած է Տ. Տ. Տօքթ. Ա.թաբէկեանէ, Յ. Բարսամեանէ և Տիգրան Աճէմեանէ։

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Քամառ-Քաթիպան

Գրեց ԲԱԲԱ-ԳԱՍՊԱՐ։

Պուլկարիոյ մէջ գին 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ։

Ցանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան։

„ԲԱՆԱՍԷՐ“

—

Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական եւ Քննական։

Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆԻ.

Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գիրքը 100 էջով, 6 ֆրանք։

Հասցէ՝

M. Basmadjian
112, B-d Rochechouart, 112
Paris

„ՀԱՅՐԵՆԻՔ“

—

Ազգային շաբաթաթերթ, տարեկան մէկուկէս տօլար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք։

Հասցէն՝ Խմբ. Հայրենիքի
628 Third Avenue
New York City
(U. S. A.)

ԿՈՒԶԷ՞Ք ՀԱՐՍՏԱՆՈՒ

—

Դիմեցէ՛ք

Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.
ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.